*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

# *ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ*

## *Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք*

| | |
|---|---|
| Հետազոտության թեման՝ | Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան |
| Առարկան՝ | Հայոց լեզու և գրականություն |
| Հետազոտող ուսուցիչ՝ | Կարինե Հայկի Ալեքսանյան |
| Ուսումնական հաստատություն | ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց |

**Երևան 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Կրթակարգի սահմանումը և նպատակները:

Հանրակրթության կազմակերպման սկզբունքները

Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները Հանրակրթական դպրոցի սովորողի կատարելատիպը

Կրթական պահանջի վերահսկումը և գնահատումը ըստ առարկայական և պետական չափորոշիչների

Եզրակացություններ և առաջարկություններ

Օգտագործված գրականության ցանկ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի եմ: Իմ դասի ժամանակ ես իմ առջև նպատակ եմ դնում ձևավորել, զարգացնել և ամրապնդել լեզվական հմտություններ հաղորդակցման, ինքնարտահայտման, մտածողության զարգացման տարբեր մեթոդներ, ստեղծագործելու կարողություն:

Լեզուն մտածողության հիմնական միջոցն է, և այն մարդուն հնարավորություն է տալիս սեփական մտքերը, հույզերը արտահայտելու, շրջապատող աշխարհը հասկանալու, մարդկանց հասկանալու, գրական-գեղարվեստական արժեքներին հաղորդակից դառնալու, մարդու, բնության և հասարակության մասին բազմաբնույթ գիտելիքներ արտահայտելու հնարավորություն:

Այս իրականացնելու համար սովորողը պետք է տիրապետի բանավոր և գրավոր խոսքին: Հենց սա է հայոց լեզվի գերխնդիրը: Ես սովորողին տարատեսակ աշխատանքների միջոցով բացատրում եմ ուղղագրական, ուղղախոսական կանոններ, մեծածավալ աշխատանք կատարում բառապաշարը հարստացնելու համար՝ ուսումնասիրելով հոմանիշներ, հականիշներ, համանուններ, քիչ գործածվող բառերի իմաստների բացատրություններ: Այս աշխատանքները կատարում ենք թե՝ դասագրքի, թե՝ շտեմարանների, թե՝ բառարանների շրջանակներում: Ինչպես արդեն նշեցինք, այս կարգի աշխատանքների կատարումը սովորողի մոտ զարգացնում են ճանաչողության, մտածողության և ճիշտ հաղորդակցվելու կարողություններ և հմտություններ:

Իսկ գրականությունը կյանքը ճիշտ ճանաչելու, հասկանալու, գնահատելու պրոցես է և գրականության դասի ճիշտ կազմակերպումը հնարավորություն է տալիս սովորողին համապատասխան իրադրության մեջ ճիշտ մտքեր շարադրելու, կարծիք հայտնելու, երևակայելու, համեմատելու, բնութագրելու, վերլուծելու, հիմնավորելու, խորքային ներթափանցելու:

Այսպիսով՝ ձևավորվում է սովորողի գնահատականը ազգային լեզվի, գրական արժեքների նկատմամբ, օգնում է ինքնաճանաչման և ինքնագնահատման, ինքնատիպ և անկախ որոշումներ կայացնելու: Այսպիսով, սովորողին հնարավորություն է տրվում ինքնուրույն մտածողությունը դարգացնել ծրագրային նյութի; շրջանակներում, ինչպես նաև ղրանից դուրս՝ նյութը ընդլայնելով և խորքային դարձնելով: Ինչպես Դ. Էլկոնինն է փաստում. «...աշակերտի պարտականությունը ոչ միայն դպրոց հաճախելն է, ուսուցչին լսելը ու տնային աշխատանքները ճշգրիտ կատարելը, այլև մարդու՝ ինքն իրեն կատարելագործելու և զարգացնելու վերաբերմունքը»: Իսկ այս ամենը բխում է անհատի տարբեր առարկաների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրություններից, որով էլ պայմանավորված է դպրոցում կրթական և դաստիարակչական խնդիրների լուծման հաջողությունը:

## Սովորողի գիտելիքների արժեհամակարգի ձևավորումը և զարգացումը հանրակրթական դպրոցում

Միջնակարգ հանրակրթական դպրոցում գիտելիքների յուրացման, դաստիարակության ճիշտ կազմակերպման արդյունքում սովորողը պետք է՝

- լինի հայրենասեր. մարդասեր, ազնիվ
- ճանաչի և սիրի իր հայրենիքը, տիրապետի իր մայրենի լեզվին, ընդունի և սիրի սեփական ժողովրդի գոյատևման և առաջընթացի արժեքները
- ունենա պետական չափորոշիչներով կյանքում առաջնորդվելու ունակություն
- ունենա ինքնուրույն մտածելակերպ և որոշումներ կայացնելու ունակություն
- լինի իր ժողովրդի պետության, հասարակության, բնության մի մասնիկը
- իմանա իր իրավունքները, պարտականությունները
- կարողանա վերլուծել հասարակական երևույթները, իրադարձությունները և ճիշտ կողմնորոշվի այդ հարցերում
- իմանա որ միայն իր ժողովրդի, այլև համաշխարհային պատմությունը, ճանաչի մշակութային արժեքները
- իրազեկ լինի իր երկրի տնտեսական, քաղաքական, գիտական և արվեստի նվաճումներին
- մտահոգվի ազգային խնդիրներով և դրանց լուծման հնարավորություններով
- գիտակցի ընտանիք կազմելու անհրաժեշտությունը և պատրաստ լինի ծնողի և ամուսնու դերին
- կարողանա ճիշտ գնահատել սեփական հնարավորությունները, հակված լինի լավատեսությանը և սեփական ուժերի հանդեպ վստահությանը:

## Կրթական պահանջների կատարման

## վերահսկում և գնահատում

Վերահսկումն ու գնահատումը իրականացվում է կրթակարգի ներդրումը, նրա պահանջների կատարումը և շարունակական զարգացումն ապահովելու նպատակով: Սա իրականացվում է երկու ձևով՝ ներքին և արտաքին:

Ներքին (ներդպրոցական) վերահսկումը և գնահատումը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Իսկ արտաքին վերահսկումը և գնահատումը իրականացվում է օրենսդրությամբ նախատեսված համապատասխան լիազորություններ ունեցող մարմնի կողմից: Դրանք են՝ կրթության տեսչությունը, նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչությունը:

Կրթակարգի վերահսկման և գնահատման ենթակա հարցերն են.

1. կրթակարգի իմացության մակարդակը
2. չափորոշիչների պահանջների կատարումը
3. դպրոցի ուսումնական պլանի օրինականությունը
4. կրթության բովանդակության վերահսկման վիճակը
5. մեթոդական աշխատանքների կազմակերպումը
6. ներքին վերահսկողության և գնահատման ընթացքը:

Վերահսկման և գնահատման ընթացքում պետք է պահպանվեն հետևյալ սկզբունքները՝

ա) օրինականություն

բ) հիմնավորվածություն

գ) նպատակաուղղվածություն

դ) գիտականություն

ե) խորություն

զ) բազմակողմանիություն

է) համակարգվածություն

ը) թափանցիկություն

թ) անաչառություն

ժ) բարյացակամություն:

Վերահսկման և գնահատման գործընթացը հսկում է ոչ միայն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, որոշակի արժեքային համակարգի ձևավորումը, այլ նաև ուսուցչի կատարած աշխատանքի արդյունավետությունը:

Ուսուցիչը, հիմք ընդունելով կրթության չափորոշիչները և ծրագրային նպատակները, պետք է արդյունավետորեն իրականացնի ուսումնական գործընթացի պլանավորում, նախագծի իր առարկայի կառուցվածքը, մշակի դասը, հիմնավորի նյութի գաղափարը, ստեղծի ուսումնական այնպիսի մոտեցում, որն իմաստավորի առարկան տարբեր տեսանկյուններից:

## Կրթակարգի սահմանումը և նպատակները:

## Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները

Հանրակրթություն իրականացնող կառույցը՝ դպրոցը, ձևավորում է սովորողների գիտելիքների և դաստիարակության համակարգ ուսուցչի կողմից որը բխում է տվյալ երկրի սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացման անհրաժեշտությունից, ազգային, քաղաքական, տնտեսական խնդիրներից:

Կրթությունը մարդկության կենսագործունեությունը, առաջընթացը ապահովող ոլորտն է, որտեղ դաստիարակվում և ձևավորվում են մարդու կյանքի համակարգային փոփոխությունները, հոգևոր և մշակութային արժեքները, այլ կերպ ասած՝ կերտվում և ձևավորվում է տվյալ երկրի քաղաքացին:

Կրթության բովանդակությունը ներկայացվում է ուսումնական բնագավառներով և բովանդակային բաղադրիչներով, որոնք կազմված են ուսումնական ծրագրերի և առարկայական չափորոշիչների միջոցով: Առարկայական չափորոշիչները սահմանում են դասավանդվող յուրաքանչյուր առարկայի ուսումնական նպատակները, հենքային բովանդակությունը, սովորողին ներկայացվող պահանջները, ուսուցման արդյունքների ամրագրումը:

Առարկայական չափորոշիչները մշակվում են պետական չափորոշիչներին համապատասխան, որոնք գործածության են երաշխավորվում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

### *Առարկայական չափորոշչի ստեղծման հիմնական սկզբունքները*

1. Պետական չափորոշչով հաստատված ընդհանրական բովանդակության որոշակիացում և տեղեկացում

2. Ուսումնական նյութի և կիրառական հմտությունների գնահատելիության ապահովում

3. Ուսուցման արդյունքների գնահատման իրականացում

4. Առարկայի բովանդակության, կառուցվածքի, ուսումնական նյութի կիրառական հմտությունների շարունակական զարգացում

5. Միջառարկայական կապի ապահովում է

6. Սովորողների բազմաբնույթ ուսումնական գործունեության պլանավորում

7. Ուսումնական ծրագրերի կատարման ստուգման եղանակների կանոնակարգված, հստակ սահմանում

8. Ուսումնական գործունեության տարբեր աշխատանքների՝ գործնական, լաբորատոր աշխատանքների իրականացում և այլն:

Միջնակարգ կրթության չափորոշչում ուսումնական բնագավառը ներկայացվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով: Դրանք են՝

ա) գիտելիքների համակարգ

բ) ճանաչողության-մտածողության մեթոդներ

գ) կարողությունների և հմտություններ՝

1. Հաղորդակցական
2. Համագործակցածին
3. Ինքնակազմակերպման
4. Ստեղծագործական

դ) արժեքային համակարգ

# 1. Գիտելիքների համակարգ

Այս բաղադրիչով սահմանվում են սովորողների յուրացման համար նախատեսված գիտելիքները՝ ելնելով դպրոցի նպատակներից և խնդիրներից: Դրանք են՝

ա) գիտելիքներ մարդու մտածողության, մտագործունեության տեսակների և մեթոդների մասին

բ) գիտելիքներ հայոց լեզվից, գրականությունից, այլ լեզուներից

գ) գիտելիքներ մաթեմատիկայից, սահմանումներ, մեթոդներ, դրանց կիրառումը

դ) գիտելիքներ բնության, շրջապատող աշխարհի մասին

ե) գիտելիքներ մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էակի, անհատի և քաղաքացու մասին

զ) գիտելիքներ պատմական երևույթների, դեպքերի, աշխարհայացքային պատկերացումների մասին

է) գիտելիքների ընտանիքի ճիշտ կառուցման, երեխայի ճիշտ դաստիարակության ու խնամքի մասին

ը) գիտելիքներ արվեստի, տեխնոլոգիաների ոլորտների մասին

թ) գիտելիքներ արժեքային համակարգի՝ ազգային և համամարդկային բարոյական, հոգևոր, սոցիալական արժեքների մասին

## 2. Ճանաչողության-մտածողության մեթոդներ

Այս բաղադրիչը չափորոշիչում ներկայացվում է գիտելիքների համակարգի բաղադրիչի հետ սերտ կապի մեջ, քանի որ երեխայի աշխարհ-ճանաչումը սկսվում է նրա՝ շրջապատող աշխարհի հետ շփումից և հարաբերություններից: Անչափ կարևոր են աշխարհընկալման համար ճանաչողության մեթոդների ճիշտ կիրառումը, որովհետև դրանք հնարավորություն են տալիս իրականության արտացոլումը և վերարտադրումը զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով:

Բարձրակարգ մտածողությունը ենթադրում է, որ սովորողը կարող է

ա) գիտելիքներ ձեռք բերել զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով՝ կիրառելով զանազան հմտություններ՝ մտապահելում դասակարգելու, օգտագործելու և այլն:

բ) վերլուծել՝ կիրառելով տարբերակելու, խմբավորելու, դասակարգելու, քննարկելու, մեկնաբանելու, համեմատելու, բացատրելու և այլ մեթոդներ

գ) եզրակացություններ անել՝ կիրառելու, ամփոփելու մեթոդներով

դ) ընդհանրացնել և համադրել՝ կիրառելով գնահատելու, հիմնավորելու, փաստարկելու, արտացոլելու, հերքելու, կանխատեսելու, ստեղծագործելու, արժևորելու և այլ մեթոդներ:

## 3. Կարողություններ և հմտություններ

### 3.1. Հաղորդակցական կարողություններ և հմտություններ

Հաղորդակցական կարողություններ և հմտությունները սովորողին հնարավորություն են տալիս

ա) հասարակության մեջ ընդգրկվելու, կոլեկտիվում և շրջապատում ինքնարտահայտվելու և ինքնագնահատվելու

բ) սեփական մտքերը ճիշտ և պարզ բանավոր եզրավոր արտահայտելու

գ) լսելու, ճիշտ ընկալելու

դ) տրամաբանված խոսքով հանդես գալու:

### 3.2. Համագործակցային կարողություններ և հմտություններ

Համագործակցային կարողությունները և հմտությունները սովորողին օգնում են կյանքում, ուսման մեջ ընդգրկվելու կոլեկտիվ, թիմային աշխատանք կատարելու գործում: Կարելի է ասել, որ սա նպաստում է ազատ, անկաշկանդ, անկոմպլեքս հարաբերվելու տարատեսակ որակներ՝

ա) խմբում աշխատելու կարողություն և հմտություն

բ) դրական հարաբերություններ ստեղծելու կարողություն

գ) ընկերոջ, դիմացինի առավելություններն ընդունել ու և նրանցից սովորելու ունակություն

դ) սովորելու և սովորեցնելու կարողություն

ե) ընկերներին ճանաչելու և գնահատելու ունակություն

զ) թիմային աշխատանքներում որոշումներ կայացնելու կարողություն

է) շփումների ժամանակ բարեկիրթ լինելու կարողություն

ը) բանավիճելու և հաստատելու հմտություն

թ) բարոյական նորմերին հակասող նախապաշարումներից զերծ մնալու կարողություն:

**Ինքնակազմակերպման կարողություններ հմտություններ**

Այս կարողությունները և հմտությունները օգնում են յուրաքանչյուր սովորողի ճիշտ կազմակերպել բնականոն առօրյան, ուսումնական աշխատանքները, ինյու փ նաև հանգիստը Այս ամենի արդյունքում սովորողը ունենում է՝

ա) սեփական ուժերն ու հմտությունները ճիշտ գնահատելու և ըստ այդ5 ուսումնական և աշխատանքային գործունեություն ծավալելու ունակություն

բ) սեփական աշխատանքի գիտակցում և դրա նկատմամբ պարտաճանաչություն և պատասխանատվություն դրսևորելու ունակություն

գ) նպատակներ դնելու, ծրագրեր ստեղծելու և դրանց իրականացնելու հմտություն

դ) աշխատանքի և հանգստի ճիշտ կագմակերպելու կարողություն

ե) ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ զբաղվելու կարողություն

3.3. **Ստեղծագործական ունակություններ և կարողություններ**

Սովորողը, որն օժտված I. ստեղծագործական ունակություններով, պետք է ձգտի արժևորել իր գիտելիքները, խթանի իր երևակայության զարգացմանը: Սրա արդյունքում սովորողը պետք է ունենա՝

ա) տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

բ) հիմնախնդիրը զանազան տեսանկյունից դիտարկելու, ուսումնասիրելու, լուծումներ գտնելու կարողություն

գ) սեփական մտքերը համադրելու և անհրաժեշտության դեպքում հակադրելու ունակություն

դ) երևակայելու և պատկերավոր մտածելու կարողություն

ե) ինքնուրույն որոշումներ կայացնելու հմտություն

զ) կարծրացած մտածելակերպից հրաժարվելու և համարձակ կարծիքներ արտահայտելու հմտություն

է) հետաքրքրություններ ցուցաբերելու նոր դրսևորումների ունակություն

## 4. Արժեքային համակարգ

Արժեքային համակարգը գիտելիքների, կարողությունների, հմտություններ հիմքի վրա ձևավորված անձային, հասարակական և հոգևոր արժեքների ամբողջությունն է, որն արտահայտվում է մարդու գործողությունների, վերաբերմունքի միջոցով:

Հանրակրթությամբ ձևավորված արժեքային համակարգ ունեցող սովորողը պետք է լինի՝

ա) բարոյական հիմնական նորմերի կրող, ունենա արժանապատիվ կեցվածք, տարբերակի ճիշտն ու սխալը, բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը, ազնիվն ու անազնիվը

բ) գիտակցի սեփական լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների կարևորությունը և լինի դրանց կրողը

գ) սիրի իր հայրենիքը, նաև հարգի պետական խորհրդանիշները

դ) սիրի և հարգի իր ընտանիքը և հարազատներին, գիտակցի իր տեղը և դերը հասարակության մեջ

ե) գնահատի ճշմարիտը, ազնիվը և լինի ուղղամիտ

զ) լինի աշխատասեր և աշխատանքը գնահատող

է) լինի հեռատես, նախաձեռնող, նպատակային

ը) պատրաստ լինի հանրային աշխատանքի և բարեգործության

բ) կարևորի զինծառայությունը

գ) փորձի տիրապետել օտար լեզուների և դրանցով հաղորդակցվելու

դ) սոցիալական հարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Դասագրքի բարեփոխում և կատարելագործում
- Ուսումնական նյութի բովանդակության արդիականացում
- Դպրոցի հանդեպ հանրության, ծնողների վստահության ձևավորում, ուսուցիչ-ծնող, դպրոց-հասարակություն հարաբերությունների կարգավորում
- Ըստ սովորողի տարիքի՝ սովորողի համար կրթությունը դարձնել ավելի մատչելի և պարզ
- Ուսուցչական համակարգում տղամարդ ուսուցիչների աճ
- Կրթության համակարգը համապատասխանեցնել միջազգային կրթական չափանիշներին
- Ձևավորել հանրակրթության ֆինանսավորման այնպիսի համակարգ, որը կապահովի ուսուցչի աշխատանքի ճիշտ և արժանավայել ֆինանսավորում:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կրթական բարեփոխումներ (Կրթական բարեփոխումների կենտրոն)
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկագրի հավելված
3. Կրթական քաղաքականություն, հավելվածներ: